



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 11 » *փետրվարի* 2022 թ.

N *25-Ա/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԳՐԿՎԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի N 49-Ա/1 հրամանով հաստատված աշխատակարգի 6-րդ կետի պահանջները.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակված հայտարարության հիման վրա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի N 49-Ա/1 հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված աշխատակարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխանող անձանց և կազմակերպությունների ներկայացրած դիմումները բավարարել:

2. Հաստատել հրամանով հաստատված աշխատակարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխանող Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական



հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվող անձանց և կազմակերպությունների կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Նախարարության մամուլի քարտուղարին՝ հրամանով հաստատված աշխատակարգի 6-րդ կետով սահմանված ժամկետներում դիմումը բավարարելու մասին որոշումը տեղեկացնել դիմումատուներին, իսկ սույն հրամանը հրապարակել Նախարարության պաշտոնական կայքէջում:

2/11/2022

X



ՆԱՐԵԿ ՄԿՐՏՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՅԱՆ

